***ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության <<Թ.Կրպեյանի անվան հ.62 ավագ դպրոց>> ՊՈԱԿ***

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

# ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

# ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

# ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

***Տնօրենի ուսումնադաստիարակչական***

***աշխատանքների գծով տեղակալ՝ Գ. Գևորգյան***

***2022-2023***

***ուսումնական տարի***

**2022-2023 ուսումնական տարում իրագործվող հիմնախնդիրներ**

1. Հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում
2. Ուսումնական ծրագրերի կատարում
3. Ուսումնական պարապունքների դասացուցակի կազմում
4. Սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության կանոնակարգում
5. Մեթոդական աշխատանքների կանոնակարգում
6. Առարկայական մասնախմբերի աշխատանքների ղեկավարում
7. Դասավանդման որակի վերահսկում
8. Աշակերտների գիտելիքների մակարդակի բարձրացման վերահսկում
9. Ուսուցչի լավագույն աշխատանքի,դրական փորձի տարածում
10. Ուսուցիչներին կրթական և մանկավարժական ոլորտներում տեղ գտաց նորությունների և փոփոխությունների իրազեկում

# Աշխատանքների կազմակերպումը 2022-2023 ուստարում

| Հ/Հ | Կատարման ժամկետը | Քայլերը | Աշխատանքների բովանդակությունը |
|---|---|---|---|
| 1 | Օգոստոսի 20-31-ը | Մանկավարժական խորհրդի նիստ | Մանկավարժական խորհուրդը որոշում է ընդունում օգոստոսի 20- 30-ի վերաքննությունների հանձնաժողովների և ժամանակացույցի վերաբերյալ: |
| 2 | Օգոստոսի 23-31-ը | Սովորողի ծնողին տեղեկացնելը քննության մասին | Դասղեկը տեղեկացնում է սովորողի ծնողին առաջիկա քննության օրվա մասին: |
| 3 | Օգոստոսի 25-31-ը | Հանրակրթական ուսումնական հաստատության մեթոդմիավորման կողմից նախնական դասաբաշխման կատարում | Հանրակրթական ուսումնական հաստատության հաջորդ ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների հիման վրա մեթոդմիավորումը նախնական դասաբաշխման հարցը կարող է քննարկել հունիսի երկրորդ կեսին մանկավարժական աշխատողների արձակուրդ գնալուց առաջ: |
| 4 | Օգոստոսի 17-ին | Տնօրենի հրամանը վերաքննությունների հանձնաժողովների և ժամանակացույցի վերաբերյալ | Տնօրենի հրամանով, հիմք ընդունելով սովորողների [փոխադրման և ավարտման կարգի](#) պահանջներն ու մանկավարժական խորհրդի որոշումը, հաստատվում են վերաքննությունների հանձնաժողովների կազմն ու դրանց ժամանակացույցը: |

| | | | |
|---|---|---|---|
| **5** | Օգոստոսի 27-30-ը | Վերաքննությունների անցկացում | Հիմք ընդունելով սովորողների փոխադրման և ավարտման կարգի պահանջներն ու տնօրենի հրամանով հաստատված քննությունների հանձնաժողովների կազմն ու դրանց ժամանակացույցը, անցկացվում են քննությունները: |
| **7** | Օգոստոսի 25-31-ը | Հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի կողմից մեթոդմիավորումների ներկայացրած նախնական դասաբաշխման առաջարկի քննարկում և որոշման կայացում: | Մանկավարժական խորհուրդն այս դեպքում որոշում է ընդունում դպրոցական բաղադրիչի ժամաքանակը որոշակի առարկայախմբերի հատկացնելու վերաբերյալ: |
| **8** | Օգոստոսի 27-31-ը | Տվյալ առարկայախմբին տրված ժամաքանակի՝ որոշակի առարկաներին հատկացնելու հարցի քննարկում մեթոդմիավորման կողմից և համապատասխան առաջարկությամբ այն մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացում. /մանկավարժական խորհրդի համապատասխան որոշման կայացում, ինչը հաստատվում է տնօրենի հրամանով/ | Մանկավարժական խորհրդի որոշման և տնօրենի համապատասխան հրամանով ձևակերպվում է հանրակրթական ուսումնական հաստատության առաջիկա ուսումնական տարվա ուսումնական պլանը: |
| **9** | Օգոստոսի 27-31-ը | Հանրակրթական ուսումնական հաստատության առաջիկա ուսումնական տարվա ուսումնական պլանի հաստատում | Հաստատության ուսումնական պլանը մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատվում է տնօրենի հրամանով: |

| | | | |
|---|---|---|---|
| **12** | Օգոստոսի 30-31-ը | Վերաքննություններ չհանձնած սովորողի ծնողի դիմումը | Վերաքննությունների արդյունքում 1 կամ 2 (11-րդ դասարանում՝ 3) առարկայից 1-3 կամ 1-7 միավոր ստացած սովորողի ծնողը (օրինական ներկայացուցիչը) դիմում է տնօրենին այդ առարկայից(ներից) հաջորդ ուսումնական տարվա ընթացքում քննություն հանձնելու պայմանով սովորողին հաջորդ դասարան փոխադրելու համար: |
| **15** | Օգոստոսի 30-31-ը | Առաջին կիսամյակի դասացուցակի նախնական տարբերակի կազմում | Առաջիկա ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասացուցակի նախնական տարբերակը կազմվում և ուսուցիչներին է ներկայացվում մինչև ուսումնական պարապմունքների սկիզբը |
| **16** | Օգոստոսի 30-31-ը | Հանրակրթական դպրոցի դասարանների կազմավորում | Հանրակրթական դպրոցի դասարանները կազմավորվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա համար՝ մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա, տնօրենի հրամանով՝ պահպանելով ՀՀ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգի և ՀՀ հանրակրթական ուսհաստատությունում բազմահամակազմ դասարանի կազմավորման կարգի պահանջները: |
| **18** | Սեպտեմբերի 1-4-ը | Առաջին կիսամյակի դասացուցակի հաստատում | **Դասացուցակը հաստատվում է տնօրենի հրամանով: ԴԿՏ (emis.am) համակարգում դասացուցակի և դասաբաշխման վերաբերյալ տվյալների ներմուծման արդյունքում ինքնաշխատ կերպով ձևավորվում են** |

| | | | |
|---|---|---|---|
| | | | **տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակները:** |
| **19** | Սեպտեմբերի 1-7-ը | Առանձին ուսումնական առարկաների թեմատիկ պլանի կազմում և հաստատում տնօրենի կողմից | Թեմատիկ (օրացուցային) պլանը կազմվում է առարկան դասավանդող ուսուցչի կողմից և մեթոդմիավորման հավանությամբ ներկայացվում տնօրենի հաստատմանը: |
| **22** | Սեպտեմբերի 1-10-ը | Առաջին կիսամյակի դասացուցակի և դասաբաշխման, առարկայական թեմատիկ պլանների, սովորողների անձնական գործերի լրացում ԴԿՏ (emis.am) էլեկտրոնային համակարգում | Առաջին կիսամյակի դասացուցակի, առարկայական թեմատիկ պլանների հաստատումից և սովորողների համակազմի ձևավորումից հետո դասացուցակը, թեմատիկ պլանները, սովորողների անձնական գործերում ընդգրկված տվյալները լրացվում են ԴԿՏ ( emis.am) էլեկտրոնային համակարգում: Կատարվում է նաև ուսուցիչների վերաբերյալ տվյալների փոփոխություն՝ առկայության դեպքում: |
| **23** | Հոկտեմբերի 1-ին | Վերաքննությունների արդյունքների ամփոփում | Վերաքննությունների արդյունքների հիման վրա մանկավարժական խորհուրդը որոշում է ընդունում սովորողներին հաջորդ դասարան փոխադրելու, դասընթացը կրկնելու կամ հաստատությունից դուրս մնալու մասին: Մանկխորհրդի որոշումը հաստատվում է տնօրենի հրամանով: Այդ որոշումը հիմք է հանդիսանում հաջորդ ուսումնական տարում դասարանների կազմավորման համար: Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում՝ ԴԿՏ (emis.am) հաստատության կողմից սովորողների տվյալների մուտքագրման արդյունքում կատարվում է դասարանների ձևավորում: |

| | | | |
|---|---|---|---|
| **28** | Ուսումնական տարվա ընթացքում | **<u>Մ/մ նիստեր հրավիրել յուրաքանչյուր ամիսը 1 անգամ</u>**. _զեկուցումների ընթերցում. _լաբորատոր աշխատանքների կատարում. _միջոցառումների պլանների կազմում | **<u>Աշխատանք տանել առարկայական մասնախմբերի հետ.</u>**<br>• հրավիրել խորհրդակցություն. տնօրենի ուսումնական գծով, մասնագիտական կրթական աջակցությունների գծով տեղակալների և առարկայական մ/մ հետ .<br>• ուշադրություն դարձնել բնագիտական առարկաների դասավանդմանը.<br>• քննարկել ուստարվա կատարվելիք աշխատանքները դահլիճում.<br>• անցկացնել առարկայական մասնախմբերի ղեկավարների սեմինար-խորհրդակցություն, լսել մ/մ նախագահների հաշվետվությունների, կատարած աշխատանքների մասին. քննարկել և տալ համապատասխան հանձնարարականներ.<br>• մասնախմբերում կազմակերպել առարկաների 2021 -2022 ուստարում ստեղծված թեմատիկ նյութի խմբագրում. համադրել առարկայական ծրագրերին, չափորոշիչներին: |
| **31** | Մշտապես | Կատարել դասալսումներ | Նույն օրը քննարկել ուսուցչիհետ,հարկ եղած դեպքում դասալսման տետրում գրել անհրաժեշտ դիտողություններ և առաջարկություններ: |
| **32** | Ուսումնական տարվա ընթացքում | Կազմակերպել բաց դասեր առաջավոր փորձի մասսայականացման նպատակով: | Կազմել ժամանակացույց՝ նշելով ուսուցչի անուն,ազգանունը,առարկան թեման, դասարանը: |
| **33** | Ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնասիրե քննական առարկանների դասավանդման վիճակը: | Արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերի նիստերում: |
| **34** | Նոյեմբեր-դեկտեմբեր | Կազմակերպել առարկայական օլիմպիադաներ: | Նախապես կազմած տեքստերը Ներկայացնել հաստատման: |
| **39** | Նոյմբեր-դեկտեմբեր | Մանրամասն ներկայացնել քննության անցկացման, առցանց հայտագրման կարգը և կարևորությունը. | **Հանդիպում կազմակերպել 12-րդ դասարաններում սովորող աշակերտների ծնողների հետ.** ներկայացնել միասնական քննությունների անցկացման կարգը և ձևաչափը. |

| | | | |
|---|---|---|---|
| **35** | Ուսումնական տարվա ընթացքում | Հարստացնել լաբորատորիաները: | Հետևել, որպեսզի դասը հագեցվաց լինի զանազան ուսումնական նյութերով, լաբորատոր սարքավորումներով: Կարևորել տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը: |
| **34** | Ուսումնական տարվա ընթացքում | Տնօրենի ուսումնական գծով տեղակալների հետևողական աշխատանքներ | Ստուգել էլեկտրոնային դասամատյանները. դիտողությունները գրանցել և ներկայացնել մ/մ նախագահներին: |
| **35** | Դեկտեմբեր | 1.Կազմակերպել միասնական քննությունների հայտագրման առաջին փուլի գործընթացը<br>2.Դեմկտեմբերին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողների գրավոր դիմումը հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենին | 12-րդ դասարանի սովորողը դեկտեմբեր ամսին կարող է հանձնել այն առարկայի(ների) պետական ավարտական քննություն(ներ)ը, որ(ոնք)ը չի ընտրել և չի ուսումնասիրելու 2-րդ կիսամյակում: Միասնական քննությանը մասնակցող սովորողը դեկտեմբերին պետական ավարտական քննություն(ներ) կարող է հանձնել այն առարկա(ներ)ից, որ(ոնք)ը չի հանձնելու միասնական քննությունների համակարգով: |
| **36** | Դեկտեմբեր | Պետական ավարտական քննություններ հանձնողների դիմում-հայտերի փոխանցումը «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ (ԳԹԿ) | Հաստատության տնօրենը քննություններ հանձնողների դիմում-հայտերը էլեկտրոնային եղանակով փոխանցում է ԳԹԿ |
| **37** | Դեկտեմբեր<br><br>Մշտապես | Արխիվացնել թեմատիկ գրավոր աշխատանքները՝ արդյունքները գրանցելով մ/մ գրքերում և քննարկելով:<br><br>Ուսումնական ծրագրի կատարողականի ստուգում և արդյունքների քննարկում մ/խ նիստերում:<br><br>էլեկտրոնային դասամատյանների վարման | **<u>Պարբերաբար ստուգել թեմատիկ գրավոր աշխատանքները, արդյունքները քննարկել մ/մ և մ/խ նիստերում.</u>**<br>ա/ ստուգել տարբեր առարկաներից տրված թեմատիկ գրավոր աշխատանքների քանակը, որակը, արդյունքները քննարկել մ/խ նիստում /անհնարինության դեպքում անցնել հեռավարի/:<br>բ/ստուգել ուսումնական ծրագրի կատարողականը և արդյունքները |

| | | | |
|---|---|---|---|
| | | ստուգում, թերությունների գրանցում, բացակայությունների հաշվառում և ամփոփում մ/խ նիստերում: | քննարկել մ/խ նիստերում. գ/ ստուգել էլեկտրոնային դասամատյանները , հետևել վարման կարգին: Հետևողական լինել գրավոր աշխատանքների՝ ըստ չափորոշչի գնահատման կարգի նկատմամբ: |
| **38** | Հունվար<br><br>Փետրվար | Ֆիզկուլտուրայի ուսուցիչների կողմից <<Առողջ ապրելակերպ>> առարկայի պատշաճ դասավանդումը կազմակերպել դասասենյակներում; | Դպրոցում առողջ ապրելակերպի ապահովում.<br>• անցկացնել <<Առողջ ապրելակերպ>> առարկայի դասընթացները՝ պահպանելով չափորոշչային պահանջները: |
| **39** | **Ապրիլի 1-ից մայիսի 1-ը** | • Հունիս ամսին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցողների ցուցակի փոխանցում ԳԹԿ<br><br>Ավագ դպրոցի 10-11-րդ դասարանների փոխադրական քննությունների տոմսերի կազմում | • Պետական ավարտական քննություններին մասնակցողների ցուցակն ըստ առարկաների հաստատության տնօրենը էլեկտրոնային եղանակով լրացնում և փոխանցում է ԳԹԿ:<br><br>**10-11-րդ դասարանների** փոխադրական քննությունների հարցատոմսերը կազմում են հաստատության մեթոդմիավորումները: |
| **40** | **Մայիսի 10-15-ը** | Ուսումնական տարվա ընթացքում **120-200 ժամ դասերից բացակայած** 12-րդ դասարանի սովորողների՝ հաստատությունից դուրս մնալու հարցի քննարկում մանկավարժական խորհրդում և համապատասխան տեղեկատվության ներկայացում: | Ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ դասերից բացակայած 12-րդ դասարանի սովորողների հաստատությունից դուրս մնալու հարցը քննարկվում է մանկավարժական խորհրդում: 12-րդ դասարանի սովորողների բացակայությունների մասին տեղեկատվությունը, մանկավարժական խորհրդում քննարկվելուց հետո Հաստատության տնօրենի կողմից ներկայացվում է նախարարություն և ԳԹԿ: |

| | | | |
|---|---|---|---|
| **41** | **Մայիս** | 10-11-րդ դասարանների փոխադրական քննությունների հարցատոմսերի ներկայացում Հաստատության տնօրենի հաստատմանը | Առաջադրանքները և հարցատոմսերը հաստատության տնօրենի հաստատմանն են ներկայացնում տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը և/կամ մեթոդմիավորման նախագահները: |
| **42** | **Հունիս** | Ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ դասերից բացակայած 2-11-րդ դասարանների սովորողների՝ հաստատությունից դուրս մնալու հարցի քննարկում մանկավարժական խորհրդում և համապատասխան տեղեկատվության ներկայացում | Ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ դասերից բացակայած 2-11-րդ դասարանների սովորողների Հաստատությունից դուրս մնալու հարցը քննարկվում է մանկավարժական խորհրդում:<br>10-11-րդ դասարանների սովորողների բացակայությունների մասին տեղեկատվությունը, մանկավարժական խորհրդում քննարկվելուց հետո Հաստատության տնօրենի կողմից ներկայացվում է Նախարարություն և ԳԹԿ:<br>Ուսումնական տարվա ընթացքում 2-12-րդ դասարաններում 120-200 ժամ բացակայության դեպքում բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով: Տարեկան գնահատականները որոշվում են երկու կիսամյակների գնահատականների հանրագումարների միջինացման արդյունքում: 2-12-րդ դասարաններում 120-200 ժամ բացակայության դեպքում սովորողները, լրացուցիչ քննություններ են հանձնում «Հայոց լեզու և հայ գրականություն», և «Մաթեմատիկա» առարկաներից, ամփոփիչ ստուգողական աշխատանքներ՝ ուսումնական պլանով սահմանված մյուս առարկաներից: «Ֆիզկուլտուրա» առարկայից անցկացվում է ստուգարք:<br>12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում 120-200 ժամ բացակայություն ունենալու դեպքում սովորողը լրացուցիչ քննություն է հանձնում այն առարկաներից, որոնք ընտրել է: 10-11-րդ, ինչպես նաև 19 տարին չլրացած 12-րդ դասարանների սովորողը 200 ժամից ավելի բացակայելու դեպքում կրկնում է տվյալ ուսումնական |

| | | | |
|---|---|---|---|
| | | | տարվա դասընթացը, 12-րդ դասարանների 19 տարին լրացած սովորողը դուրս է մնում ուսումնական հաստատությունից: |
| 43 | Հունիս | «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից պետական ավարտական քննություն,գրավոր (թեստ)<br>Ֆիզկուլտուրա՝ նորմատիվների հանձնում (ստուգարք)<br>«Ռուս գրականություն» առարկայից՝ բանավոր քննություն (ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար) | 12-րդ պետական ավարտական քննական առարկաների թեստերը կազմվում են ԳԹԿ-ի կողմից: Քննության տևողությունը՝ 120 րոպե սովորողի ընտրությամբ՝ դեկտեմբերին կամ հունիսին |
| 44 | Հունիս | Հայոց պատմություն՝ պետական ավարտական քննություն, գրավոր (թեստ) | Քննության տևողությունը՝ 120 րոպե |
| 45 | Հունիս | Մաթեմատիկա՝ պետական ավարտական քննություն, գրավոր (թեստ) | Քննության տևողությունը՝ 120 րոպե |
| 46 | Հունիս | 10-րդ, 11-րդ դասարանների սովորողներին հաջորդ դասարան փոխադրելու, քննություններին թույլատրելու հարցի քննարկում | Նշված դասարանների սովորողներին հաջորդ դասարան փոխադրելու, փոխադրական քննություններին թույլատրելու հարցը քննարկվում և համապատասխան որոշում է ընդունվում Հաստատության մանկավարժական խորհրդի նիստում: |
| 47 | Հուլիս<br>/ օգոստոս/ | **<u>Վերաքննություններ</u>**<br>«Հայոց լեզու և գրականություն»՝ գրավոր (թեստ), վերաքննություն | Վերաքննություն հանձնում են «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայ գրականություն» առարկաներից տարեկան 1-3 միավոր ստացած սովորողները:<br>Քննական թեստերի առաջադրանքները կազմվում են ԳԹԿ-ի կողմից: |
| 48 | Հուլիս<br>/ օգոստոս/ | Մաթեմատիկա՝ գրավոր (թեստ), վերաքննություն | Վերաքննություն հանձնում են «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկայից տարեկան 1-3 միավոր ստացած սովորողները:<br>Քննական թեստերի առաջադրանքները կազմվում են |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ԳԹԿ-ի կողմից: |
| 49 | օգոստոսի 20-30-ը | **«Հայոց պատմություն» գրավոր (թեստ), վերաքննություն** | Վերաքննություն հանձնում են «Հայոց պատմություն» առարկայից տարեկան 1-3 միավոր ստացած սովորողները:Քննական թեստերի առաջադրանքները կազմվում են ԳԹԿ-ի կողմից: |
| 50 | Օգոստոս | **Վերաքննություններ** | Վերաքննություն հանձնում են նշված դասարանների (այդ թվում՝ առանձին գործող ավագ դպրոցների 10-րդ և 11-րդ դասարանների փոխադրական քննություններից) մինչև 3 առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողները: Վերաքննությունների առաջադրանքները կազմվում են Հաստատության համապատասխան մեթոդմիավորման կողմից: 10-րդ դասարաններում վերաքննության արդյունքում 1 կամ 2 առարկայից 1-3 միավոր գնահատված սովորողը՝ 1) չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է դասընթացը կամ 2) ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա փոխադրվում է հաջորդ դասարան՝ պայմանով, որ մինչև հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ավարտը պետք է հանձնի 1-3 միավոր գնահատված առնվազն մեկ առարկայի քննությունը, իսկ երկրորդը՝ մինչև օգոստոսի 30-ն ընկած ժամանակահատվածում: 11-րդ դասարանում վերաքննության արդյունքում մինչև 3 առարկայից 1-3 միավոր գնահատված սովորողը՝ 1) չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է դասընթացը կամ 2) ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա փոխադրվում է հաջորդ դասարան՝ պայմանով, որ մինչև հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ավարտը պետք է հանձնի մինչև 3 առարկաների վերաքննությունները: |